«ԱՎԱՆԳԱՐԴԸ» ՁՆՀԱԼԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ
(թերթի լուսընծայման 85 ամյակի առիթով)

Խորհրդային Հայաստանի անցած ուղու մասին նորագույն շրջանի պատմաբաններն ու բանասերները համարյա ոչինչ չեն գրում, չնայած մեր երկրի պատմության մեջ մասնավորապես 1950-80-ական թվականներին թե հասարակական քաղաքական, թե տնտեսության մեջ մեծ տեղաշարժեր են կատարվել թե դրական, թե բացասական առումով: Անառարկելի փաստ է, որ բարձր հիմքերի վրա էր դրվում Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը էին ներմուծվում նոր տեխնիկան և տեխնոլոգիան: Ստալինի մահից հետո ինչպես ողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում դրական լուրջ փոփոխություններ տեղի ունեցան, սկսվեց Ձնհալի շրջանը, երբ դեմոկրատացվում ու բարեփոխվում են փոխհարաբերությունները Միության հանրապետությունների միջև 50-ամյա լռությունից հետո, վերջապես բարձրացվեց Մեծ Եղեռնի թեման, սկսեցին խոսել 1921-ին Ադրբեջանի կազմում ներգրավված հայկական հողերի մասին: Այս ուղղությամբ մեծ գործ էր բաժին հասնում մամուլին, մասնավորապես, ՀԼԿԵՄ օրգան «Ավանգարդ» թերթին, որի մասին հրապարակի վրա բացակայում են լուրջ ուսումնասիրությունները:

«Ավանգարդը» լույս տեսավ 1923-ի մայիսի 5-ին, որի առաջին խմբագիրն էր Հենրի Գաբրիելյանը: Թերթը նոր էջ բացեց մեր հանրապետության երիտասարդության համար, որն ունեցավ իր նոր, կենտրոնական լրագիրը և որին վիճակված էր կարևոր դեր խաղալ հանրապետության քաղաքական-տնտեսական, կուլտուրական կյանքում: «1920 թվականները կարելի է համարել «Ավանգարդի» զարգացման առաջին շրջան, - գրում է խորհրդահայ մամուլի պատմաբան, գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հարություն Ֆելեքյանը,- որի ընդգրկման շրջանակների, նրա առջև դրված խնդիրների կոնկրետացմանն ու հստակեցմանը զուգընթաց, սկսվում է կանոնավորվել թղթակիցների հետ տարվող աշխատանքը, քայլեր են կատարվում տպաքանակի ավելացման, բովանդակության հարստացման, տպագրվող նյութերի, ժուռնալիստական որակի բարելավման ուղղությամբ, բացվում են նոր բաժիններ ու խորագրեր»[1]:

[1] Ֆելեքյան Հարություն, «Հայաստանի պարբերական մամուլը սոցիալիզմի կառուցման պայքարում», 1970, էջ 146

«Ավանգարդի» մասին դրվատանքով է խոսում արդեն 1925թ. «Խորհրդային Հայաստան» թերթը, որն օրգանն էր ՀԿԿ Կենտկոմի, ՀՍՍՀ Սինիստրների խորհրդի և ՀՍՍՀ Գերագույն խորհրդի: Թերթը գրում է. «Ավանգարդը» պարբերաբար անդրադառնում էր Ռուսաստանի և Հայաստանի կոմերիտմիության անցյալի հերոսական դրվագներին, երիտասարդության ռազմական ուսուցման, սպորտի հարցերին: Թերթը խոշոր դեր է խաղում երիտասարդության կազմակերպման ու դաստիարակման գործում»[2]:

Մամուլի գործունեությունը, սակայն, մեծապես խոչընդոտեց անձի պաշտամունքը, որին ստիպված մեծ տուրք էր տալիս նաև «Ավանգարդը»: Բազմաբնույթ հոդվածներում, ակնարկներում, գրական բազմագան ստեղծագործություններում աստվածացվում էր անհատը, որին վերագրվում էին այն բոլոր հաջողությունները, որ կատարվել էր խորհրդային միլիոնավոր մարդկանց անձնվեր աշխատանքով: Մամուլի ելույթներում տեղ էին գտնում նաև քաղաքական շանտաժն ու չհիմնավորված մեղադրանքները, չէր բացառվում նաև անձնական հաշվեհարդարը: Սասնավորապես, ամբաստանվում և հալածանքի էին ենթարկվում շատ լրագրողներ, թերթերի և հանդեսների խմբագիրներ, աշխատակիցներ:

Սակայն գաղափարական նոր լիցք ստացավ մամուլը ՍՄԿԿ 20-րդ համագումարից հետո, երբ սկսվեցին ծնհալի տարիները: Նոր տարիները նոր խնդիրներ առաջադրեցին մամուլի աշխատողների առջև, որն էլ խթան հանդիսացավ, որ բարձրանա մամուլի գաղափարական ներգործությունը, մասսայականությունը, մեծանա թերթերի և հանդեսների ցանցը: Ձնհալի տարիներին Հայաստանում արդեն լույս էին տեսնում 80-ից ավելի թերթեր, 100-ի հասնող հանդեսներ 1.5 միլիոն ընդհանուր տպաքանակով, որը ռեկորդային էր հայ մամուլի ողջ պատմության ընթացքում:

Այս շրջանում «Ավանգարդի» խմբագիրն էր Գուրգեն Առաքելյանը, հմուտ մի լրագրող, որը հետագայում՝ 1959-ին դարձավ «Երեկոյան Երևան» թերթի գլխավոր խմբագիրը, ապա նաև «Պրավդա» միութենական թերթի սեփական թղթակիցը Հայաստանում: Ի պատիվ Առաքելյանի պիտի ասել, որ նա լրագրողի մեծ վարպետությամբ է ղեկավարել թերթը, մեր հանրապետությունում կատարվող յուրաքանչյուր դրական քայլ ներկայացրել համամիութենական ընթերցողին:

Թերթն արդեն 1956-ի առաջին համարներում տպագրել է ԽՄԿԿ 20-րդ համագումարի դիրեկտիվները, որտեղ նշվում է, թե ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման 6-րդ հնգամյակի գլխավոր խնդիրներն են՝ ծանր

---

[2] «Խորհրդային Հայաստան», 1925, հա. 207:

արդյունաբերության առավել զարգացման, տեխնիկական անընդհատ պրոգրեսի և աշխատանքի արտադրողականության բարձրացման բազայի վրա ապահովել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի հետագա հզոր աճ, իրականացնել գյուղատնտեսական արտադրության շեշտակի վերելք և այդ հիման վրա հասնել սովետական ժողովրդի նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի նշանակալի բարձրացման[3]:

Դիրեկտիվներում իր բաժինն ուներ նաև մեր հանրապետությունը. ավարտվելու էր Սևան-Հրազդան կասկադի հիդրոկայանների շինարարությունը, սկսվելու էր 100 հազար կիլովատ կարողությամբ Տաթևի հիդրոէլեկտրակայանի կառուցումը: Շահագործման էին հանձնվելու ացետատային մետաքսի, գործիքաշինական և պահածոների գործարաններ: Ավարտին էր հասցվելու Թալինի ոռոգման ջրանցքի և Արզնի-Շամիրամ՝ոռոգման սիստեմի առաջին հերթի շինարարությունը:

Ըստ «Ավանգարդի» առաջնորդողի «Խամ ու խոպան հողերի» նվաճման համար մղվող պայքարում երիտասարդությունն անցնում է կյանքի իսկական դպրոց, կոմունիզմի դպրոց: Խոպաններում են աճել գյուղատնտեսության արտադրության նոր, բազմահազար վարպետներ: Նրանցից ավելի քան 9 հազարը պարգևատրվել են «Նոր հողերի յուրացման համար» ՀԱՄԼԿԵՄ Կենտկոմի կրծքանշաններով, 5 հազարը համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցներ են դարձել: Թերթը տպագրել է ընդարձակ ինֆորմացիա՝ խամ ու խոպան հողերի յուրացման ժամանակ աչքի ընկած կոմերիտականների և երիտասարդների խորհրդակցությունից «Դեպի աշխատանքային նոր հաղթանակներ խոպան հողերում»[4] վերնագրով, որտեղ ընդարձակ ճառով հանդես է եկել ՍՄԿԿ Կենտկոմի առաջին խարտուղար Ն. Խրուշչովը:

Շրջադարձային էր Սովետական Միության համար 1956-ի փետրվարի 14-ին Կրեմլի Մեծ դահլիճում 1436 պատգամավորների և 55 եղբայրական կուսակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ բացված ԽՄԿԿ 20-րդ համագումարը, որն ավարտվեց Խրուշչովի «Անհատի պաշտամունքի և նրա հետևանքների մասին» զեկուցումով:

Սակայն, մերժելով հանդերձ ստալինյան ռեժիմի ծայրահեղությունները, Խրուշչովը, այնուամենայնիվ, դեռ գտնվում էր Ստալինի գաղափարների ազդեցության տակ: Ահա ինչ է գրում այս կապակցությամբ քաղաքական հանրահայտ մեկնաբան Ֆյոդր Բուռլացկին. «Չնայած իր ամբողջ արմատականությանը, նա չընդունեց Պալմիրո Տոլյատիի քննադատական դիտողությունը

---

[3] «Ավանգարդ», 1956, հա. հա, 6-7:
[4] Նույն տեղում, 1956 հա. 10:

(Իտալիայի կոմպարտիայի ղեկավար), երբ նա խորհուրդ էր տալիս անհատի պաշտամունքի արմատները որոնել ստեղծված համակարգի մեջ, թեև Տոլյատին իհարկե հարց չէր դնում սոցիալիզմը կապիտալիզմով փոխարինելու մասին»[5]: Այս առիթով, սակայն, Խրուշչովյան քաղաքականությունը, բնականաբար, պաշտպանում է «Պրավդան», գրելով. «Չի կարելի անցնել նաև այսպիսի փաստերի կողքով, երբ առանձին նեխած տարրեր փորձում են քննադատությունն ու ինքնաքննադատությունն օգտագործել ամեն կարգի զրպարտիչ հերյուրանքների և հակակուսակցական պնդումների համար: Նրանք անհատի պաշտամունքը դատապարտելու պատրվակով ճգնում են կասկածի տակ դնել կուսակցական քաղաքականության ճշմարտությունը»:[6] Ահա սա նկատի ունենալով է, որ «Ավանգարդը» անդրադառնում է ՀԿԿ Կենտկոմի «Առանձին կուսկազմակերպություններում տեղի ունեցած ժողովներին» քննարկմանը, արձանագրելով, թե ծավալված քննադատության և ինքնաքննադատության քողի տակ առանձին անհատներ սա օգտագործում էին հակակուսակցական ելույթների համար՝ ընդդեմ կուսակցության գլխավոր գծի և քաղաքականության: «Այսպես օրինակ,- գրում է Ամատունի Վիրաբյանը,- Երևանի պետական համալսարանի մի շարք կոմունիստներ իրենց ելույթներում թույլ են տվել բացահայտ հակակուսակցական արտահայտություններ ներկուսակցական դեմոկրատիայի, խորհրդային ընտրական համակարգի, կուսակցության և խորհրդային պետության, ազգային և արտաքին քաղաքականության սկզբունքների, ԽՄԿԿ 20-րդ համագումարի որոշումների հասցեին»:[7] Ավելին, ըստ Կենտկոմի բյուրոյի արձանագրության, ժողովները մեկ անգամ ևս ցույց են տվել, որ Հայաստանի մի շարք կազմակերպություններում (Գրողների միություն, պետհամալսարան, պետհրատ, Լենինականի մանկավարժական ինստիտուտ, Երևանի Կիրովյան շրջանի կուսկազմակերպություն) և այլն, իբր ժողովներում խորությամբ չեն քննարկվել համագումարի նյութերը, անբավարար է մոբիլիզացվել կոմունիստների ուշադրությունը համագումարի առաջադրած կոնկրետ խնդիրներին: Միաժամանակ նշվում է, որ Երևանի քաղկոմը և մի քանի շրջկոմներ, ժամանակին չեն արձագանքել ելույթներին, չեն ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «սանձարձակ մարդկանց» կտրուկ հակահարված տալու և կազմակերպություններում կարգապահություն ապահովելու համար: Իսկ «սանձարձակ» կոմունիստներ էին ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, հին կոմունիստներ Արմեն Անանյանը, Մամբրե Գարագաշը, համալսարանի դասախոս՝ Ռաֆիկ Մովսիսյանը, Հայրիկ Մուրադյանը, Բաղիշ Հովսեփյանը,

---

[5] «Լիտերատուրնայա գազետա» 24 փետրվարի, 1988:
[6] «Պրավդա», 5 ապրիլի, 1956 :
[7] Ա. Վիրաբյան, «Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով», Երևան, 2001 էջ 224-225:

Սևակ Արզումանյանը, Նաիրի Զարյանը, Հրաչյա Քոչարը և այլոք, որոնք ընդվզում էին, թե գերագույն խորհրդի պատգամավորները ոչ թե ընտրվում, այլ նշանակվում են, հայոց լեզվի անաղարտ պահպանման, գյուղացիության ծանր վիճակի, սխալ հարկային քաղաքականության, Ղարաբաղը, Նախիջևանը, Ախալքալակը Հայաստանին միացնելու և այլ հարցերի շուրջ:

«Ավանգարդը» տեղադրած ինժեներ Գ. Ղուկասյանի «Կատարելագործում են արտադրական տեխնոլոգիան» հոդվածում ներկայացնում է Երևանի Հայէլեկտրագործարանի կոմերիտականների և երիտասարդների ուժերով ներդրված նոր տեխնիկայի և տեխնոլոգիայի մասին, որը կրկնապատկում, եռապատկում է գործարանի աշխատավորների արտադրանքը, բնականաբար նաև, հավելյալ աշխատավարձի խթան հանդիսանում:[8] Իսկ նույն համարում թերթի հատուկ թղթակիցներ Կամարի Տոնոյանը և Լիա Բալագյանը «Աչքակապություն կոնկրետ աշխատանքի փոխարեն» հոդվածում քննադատում են ՀԼԿԵՄ Վեդու շրջանի կազմակերպությանը, ուր «Ու՞մ են խաբում», «Մի կերպ օր են մթնեցնում» վերտառությունների տակ խոսում են հաշվառման քարտերի փոխանակման հետ կապված ձգձգումների մասին, չնայած արդեն վերին ատյանների սուտ զեկույց են տվել շրջանում այդ գործի ավարտի մասին:

Գ. Նուրիջանյանի «Լուրջ ուշադրություն երիտասարդության ֆիզիկական դաստիարակությանը» հոդվածում առաջ է քաշում Ղափանի հանքերում աշխատող երիտասարդների առօրեական հարցեր: Շրջանը ֆիզկուլտուրայի 76 կազմակերպություն ունի, ուր ընդգրկված են 3200 երիտասարդներ, բայց նրանց անուշադրության են մատնել «Կոլտնտեսական» սպորտընկերությունը, ՀԼԿԵՄ Ղափանի շրջկոմը: Սպորտհրապարակներ չկան ու չեն կառուցվում, կաղում է քաղաքի ստադիոնի շինարարությունը»:[9]

Թերթի 1956-ի նո. 106-ը ազդարարում է, որ սկսվել է Կիև-Երևան սոցիալիստական մրցությունը: Եվ «Ավանգարդի» կոչը՝ «Երիտասարդ ընկեր, քեզ սպասում են նոր, հերոսական գործեր, նորանոր հեռանկարներ են բացվում քո ստեղծագործ աշխատանքում: Մրցությունը քո առջև սրբազան պարտք է դնում՝ անել ամեն ինչ ՍՄԿԿ 20-րդ համագումարի կողմից առաջադրված խնդիրները հաջողությամբ կենսագործելու, քաղաքի արդյունաբերական հետագա վերելքի, բնակչության կուլտուր-կենցաղային սպասարկումը բարելավելու համար»:

Վիկտոր Բալայանի «Խոստումներ, որոնք թիթեռի կյանք ունեցան» հոդվածն անդրադարձ է Դիլիջանի շրջանի Կույբիշև գյուղին, ուր չնայած

---

[8] «Ավանգարդ», 1956 հա. 18:
[9] Նույն տեղում, 1956 հա. 21:

երիտասարդության ու կոմերիտականների խոստումներին, ահավոր վիճակում է գտնվում անասնապահությունը:[10]

Առավել ուշագրավ ու բազմաբնույթ դարձավ «Ավանգարդի» բովանդակությունը, երբ խմբագրի պաշտոնն զբաղեցրեց արդեն բազմափորձ լրագրող Լորիս Կրոյանը, որն արդեն համարյա 10 տարի թերթի գրական աշխատողն էր, բաժնի վարիչը, խմբագրի տեղակալը: Նրան որպես խմբագրի, կարելի է համեմատել հայ հանրաճանաչ հրապարակախոս Գրիգոր Արծրունու հետ, որն առանց վարանելու, խմբագրության աշխատակիցներ էր դարձնում միայն տաղանդավոր լրագրողների, ի տարբերություն մեր նորօրյա ՁԼՄ-ների ղեկավարների, որոնց միայն աշխատակիցների հնազանդությունն է հետաքրքրում:

Նա հին, փորձառու այնպիսի լրագրողների ու հրապարակախոսների կողքին, ինչպիսիք էին Վարդգես Պետրոսյանը, Վիկտոր Բալայանը, Ռաֆայել Արամյանը, Սուրեն Մուրադյանը, Կամարի Տոնոյանը, Հովհաննես Մելքոնյանը, աշխատանքի հրավիրեց Ռաֆայել Համբարձումյանին, որը վարում էր պրոպագանդայի և ագիտացիայի բաժինը, Վլադիմիր Մուրադյանին, որը դարձավ խմբագրի տեղակալ, Արմեն Հովհաննիսյանին՝ արվեստի բաժնի վարիչ, Սերգեյ Բալասանյանին՝ արդյունաբերության և տրանսպորտի բաժնի վարիչ, Մուշեղ Գալշոյանին՝ գյուղատնտեսության բաժնի աշխատակից, Ռուբեն Հովսեփյանին՝ գրականության բաժնի վարիչ, ապա նաև երիտասարդ լրագրողներ Հրաչյա Մաթևոսյանին, Արևշատ Ավագյանին, Վալերի Հարությունյանին, Ռադիկ Խալաթյանին ... «Ավանգարդը» դարձել էր հայ լրագրության հայելին:

Գյուղատնտեսության, արդյունաբերության, կրթության ու դաստիարակության հարցերի հետ միասին, թերթը մեծ տեղ է հատկացնում կոմերիտական կազմակերպության հրատապ խնդիրներին, արձագանքում ՍՍՀՄ գերագույն խորհրդի կոչին ողջ մարդկությանը՝ արձագանքել ՍՍՀՄ-ի նոր, խաղաղ քաղաքականությանը, իրենց կողմից կատարել գործնական քայլեր գոյություն ունեցող զինված ուժերը կրճատելու, իրենց երկրների ժողովուրդներին սպառազինությունների բեռից ազատելու, մարդկությանը պատերազմի սպառնալիքից փրկելու և ամբողջ աշխարհի խաղաղությունն ապահովելու նպատակով:

1961-ի նոր. 17-ը հայտնում է, որ մեր հանրապետության արդյունաբերությունը միջազգային ցուցահանդեսներում՝ Լոնդոնից, Փարիզից, Հոլանդիայի Ուտրեխտ և Շվեդիայի Գյոտեբուրգ քաղաքներից բացի, ներկայանալու է նաև Ուլան-Ուդեի սովետական արդյունաբերական ցուցահանդեսում: Ցուցադրվելու են մեքենաշինության, մետալուրգիական, էլեկտրատեխնիկական, լեռնահանքային, քիմիական, շինանյութերի և սննդի արդյունաբերության

[10] Նույն տեղում, 1957 հա. 47

արտադրանքի բազմազան նմուշներ: Թերթը չի թաքցնում նաև թերությունները, մեջբերելով ՀԿԿ 21-րդ համագումարում ՀԼԿԵՄ Կենտկոմի առաջին քարտուղար Ս. Բաղդասարյանի ելույթից հատվածներ կոմերիտական կազմակերպությունների բացթողումների մասին, հայտարարելով, թե շատ ծեռնարկություններում, մտածելով միայն պլանների կատարման մասին, մոռանում են երիտասարդության ուսուցման և և հանրակրթական մակարդակի բարձրացման հարցերը: Երկար տարիներ խոսվում է հատկապես հեռավոր շրջաններում գեղարվեստական ինքնագործունեության զարգացման մասին, այնինչ միայն 1959 թվականին տասնյակ ինքնագործ խմբեր են դադարել գործելուց՝ խմբավարներ չունենալու պատճառով, քիչ են մարզական բազաները...

Ձնհալի տարիների «Ավանգարդը» մեծ տեղ է հատկացրել արվեստի և գրականության հարցերին, ներկայացրել այնպիսի մեծությունների գործեր, ինչպիսիք Համո Սահյանն էր, Շիրազը, Սիլվա Կապուտիկյանը, Վարդգես Պետրոսյանը, Վահագն Դավթյանը, Սերո Խանզադյանը, իսկ Պարույր Սևակի «Մարդն ափի մեջ» նոր հրատարկված գրքի վերաբերյալ թերթը կազմակերպել էր բանավեճ, որին ամիսների ընթացքում մասնակցել են հազարավոր ընթերցողներ, իսկ վերջում նաև Պարույր Սևակը:

Թերթը ամենօրյա համարներում պատմել է մեր հանրապետության ներկայացուցիչների մարզական հաջողությունների մասին, ներկայացրել Հռոմի և Մելբուռնի օլիմպիական չեմպիոններ Ալ. Ազարյանին, Վլ. Ենգիբարյանին, Իգոր Նովիկովին, ըմբշամարտի աշխարհի չեմպիոն Նորայր Մուշեղյանին... Հուզմունքով ու սրտի թրթիռով է «Ավանգարդը» խոսել Տիգրան Պետրոսյանի ողջ անցած ուղու մասին, իսկ առավել գորովանքով ու գովասանքով 1963 թվականի աշխարհի առաջնության մասին, որտեղ հայ շախմատիստը հռչակվեց աշխարհի 9-րդ չեմպիոն: Թերթը մեծ ուշադրություն է դարձրել նաև հանրապետությունում մասսայական սպորտի զարգացման հարցերին, քննադատել թերություններն ու բացերը, որ նկատվում էին այս ասպարեզում:

Ի ուրախություն Կրոյանի, 1960-65 թվականներին Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար էր աշխատում Յակով Զարոբյանը, որը գործելով քաղաքական բարդ պայմաններում, կարողացավ հայանպաստ ու ազգապահպան բազմաթիվ գործեր կատարել: Շատ քչերին է հայտնի հայ ժողովրդի համար շատ կարևոր Արփա-Սևան ջրատարի կառուցման, հայոց ցեղասպանության տարեթիվը պետականորեն նշելու և Եղեռնի հուշակոթողի կառուցման հետ կապված բազում հարցերի լուծման մեջ Զարոբյանի կատարած դերը:

Այս առիթով Սիլվա Կապուտիկյանը գրում էր. «Յակով Նիկիտիչի անունը դեռ երկար է ապրելու հայ ժողովրդի սրտում: Ծիծեռնակաբերդի անշեջ

հուրը վառվում է ի հիշատակ նաև Զարոբյանի»: Նա նախաձեռնեց նաև Ղարաբաղն ու Նախիջևանը Հայաստանին միացնելու հարցը, որը, ցավոք, չիրականացավ:

«Մոտենում էր օսմանյան Թուրքիայում 1915-ի հայերի կոտորածների 50-ամյակը,- գրում է Թ. Առուշանյանը, - և 1965-ի սկզբներին արդեն ակնհայտորեն զգացվում էին նոր տրամադրություններ՝ հատկապես ուսանող երիտասարդության շրջանում: Գաղտնի ու հրապարակային շրջանառվող, ձեռքից-ձեռք անցնող նյութերի, Սահարու, Շիրազի, Սևակի և մյուս մեծանուն գրողների տպագիր և անտիպ ստեղծագործությունների միջոցով ծանոթանալով և ուսումնասիրելով պատմությունը՝ հայ երիտասարդությունը նաև զգում էր համընդհանուր պահանջմունքը՝ ազգային ինքնուրույն, ազգային ակունքների ճանաչման և գնահատման անհրաժեշտությունը»[11]: Զարոբյանը նախ Խրուշչովի, ապա Բրեժնևի մոտ բարձրացրեց Հայոց Մեծ Եղեռնի հարցը, նույնիսկ իրավունք ստացավ 1965-ի ապրիլի 24-ին հրավիրել սգո հանդիսավոր նիստ, այդ օրը պետականորեն ճանաչել որպես հայոց ցեղասպանության և անմեղ զոհերի հիշատակի օր, Երևանում կառուցել զոհերի հիշատակն անմահացնող կոթող...

Հենց այդ օրվա շքերթ-ցույցի, որին մասնակցում էին առաջին հերթին համալսարանականները, որոնց առջևից քայլում էին ակադեմիկոս Հրանտ Թամրազյանը, ժողովրդական արտիստ Հովհաննես Բաղալյանը և Լևոն Ներսիսյանը, միացան տասնյակ հազարավոր ուսանողներ այլ բուհերից և Երևանի աշխատավորության հարյուր-հազարավոր ներկայացուցիչներ: Ի պատիվ «Ավանգարդի», թերթը տպագրեց ինֆորմացիա այս մասին, ապա նաև անդրադարձավ ապրիլի 24-ին օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում անցկացվող հանդիսավոր նիստին, տեղադրել «Հույսի հայրենիք, լույսի հայրենիք, իմ նոր հայրենիք, հզոր հայրենիք» էջը, տեղ տվել Համո Սահյանի «Երգ Հայաստանի» բանաստեղծությանը: Սա աննախադեպ ելույթ էր խորհրդահայ մամուլի պատմության մեջ, երբ խորհրդային գրաքննությունից չվախենալով նյութեր էին տպագրվում հանրահայտ ճշմարտության մասին, որը 50 տարի արգելված թեմա էր:

Ինչպես տարիների «Ավանգարդն», իսկապես, մեծ ներդրում է ունեցել հայ ժուռնալիստիկայի զարգացման բնագավառում, ընթերցողներին և հասարակայնությանը տալով տաղանդավոր լրագրողների ու հրապարակախոսների բազմաթիվ նոր անուններ:

---

[11] Առուշանյան Ռուբեն, «Յակով Զարուբյանն իմ հուշերում», Երևան, 2007 էջ. 24: